

Մինչդեռ Սարգիս այսպէս պատրաստութիւն կը տեսներ երկրաւոր Յաւիտենական քաղաքն երթալու՝ Նախախնամութիւնը կարգադրած էր վերին Յաւիտենական քաղաքը շուրջ իր հիւանդութիւնն յաջորդաբար կը մեղմանար եւ կը սաստկանար։ Բժիշկներու խորհրդով 1773 փետր. ամսոյ մէջ եկեղեցւոյ բնակարանէն փոխադրուեցաւ քաղաքին օդասուն մէկ տունը, ուր կը բնակէր իր ազգականներովը նաեւ Կ.Պոլսեցի Պետրոս Ա. Մուրատ-ճանն, Ուրբանեան Դպրանոցի աշակերտն։ Սարգսի գործելու կանոնաւորութեան եւ սրտին բարութեան վկայ է՝ Լիվոնոյ հասնելէն ետեւ՝ եկեղեցին բնակելու ատեն՝ եօթն օրուան մէջ ըրած ծախքին վճարման թուղթը, որուն տակ Սարգիս հետեւեալը կը գրէ իր ձեռք. «Այս վերոգրեալ բոլոր խարճին ըստակն, որ կանէր 57 լիբէ, եւ 8 կադրին, զորս ի մէջ եօթնաւոր խարճել վկայեաց կօվէրնաթօնն եկեղեցւոյն ի պէտս իմ, ի կողմանէ սուրբ Լուսաւորիչ եկեղեցւոյն, որ ի Լիվոնայ. եւ ես հաւատացի ըստ բանի նորա, որ եւ Աստուած շէն պահեսցէ զսուրբ եկեղեցին, եւ Տէր Լուսաւորեսցէ զհոգիս այսպէս բարի յիշատակ եղողացն. ամէն։ Ես նուաստ ծառայ Տեառն Սարգիս Արքեպիսկոպոս Կոստանդնուպօլսեցի ձեռագրովս հաստատեմ զվերոգրեալս։» Եւ առ հասարակ մինչեւ թաղումը եղած ծախքին մանր հաշիւն ալ բռնած է հաւատարիմ աշակերտն Յովհ. Ա. Նուրտինեան։